# Թեկնածուն՝ «գրատախտակի» առջեւ

## Ակադեմիկոսները պատրաստվում են ընտրությունների

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Գալիս ու ասում են. *«Ինչու՞ մենք չենք կարող ընտրվել, ի՞նչն է խոչընդոտում»*: Հարցի պատասխանն է. *«Սահմանված կանոնադրություն գոյություն ունի, սերնդափոխության հարց կա,... Ամեն ինչ այդքան հեշտ չէ: ԳԱԱ ակադեմիկոս ընտրվելու համար նախ՝ պետք է ունենալ Հայաստանի քաղաքացիություն, երկրորդ՝ գիտական այնպիսի աշխատանք, որը, բացի առաջնակարգ լինելուց, նաեւ միջազգային ճանաչում ունի»*:

Երեկ ՀՀ ԳԱԱ-ում հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ ԳԱԱ ակադեմիկոսների-թղթակից անդամների ընտրությունների մասին խոսելով՝ այսպես մեկնաբանեց ՀՀ ԳԱԱ նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը**:

Նա տեղեկացրեց, որ թղթակից անդամների տեղերի համար առաջադրված թեկնածուների աշխատանքների միջազգային ճանաչումը պարտադիր չէ: Սրա փոխարեն կարեւորվում է դրանց ունեցած նշանակությունը, որեւէ բնագավառում կիրառված լինելու հանգամանքը, ստացված գնահատականները, խրախուսական պարգեւները, տվյալ թեկնածուի մանկավարժական գործունեությունը եւ այլն:

*«Թեկնածուներին կարող են առաջադրել պետական կարեւորություն, լուրջ գիտական խորհուրդներ ունեցող գիտական հաստատությունները: Դրանցից յուրաքանչյուրը, հայտարարված մասնագիտության գծով, պետք է առաջադրի ընդամենը մեկ թեկնածու: Կառավարությունը հաստատել է գիտության այն ճյուղերը, որոնք մեր պետությունում պետք է զարգանան: Ուստի, ընտրվող մասնագետները պետք է համապատասխանեն նաեւ դրան վերաբերող դրույթներին:*



*Մենք ունենք նաեւ գիտության կարեւոր ոլորտներ, որտեղ մասնագետների թիվը պակասել է եւ պակասելու վտանգը դեռ կա: Եվ, որպեսզի հետագայում լուրջ խնդիրների չբախվենք, նշված բնագավառները փորձում ենք հագեցնել երիտասարդ մասնագետներով՝ լուծելով նաեւ սերնդափոխության հարցը: Ահա թե ինչու հայագիտության եւ հումանիտար ոլորտներում ընտրության համար ավելի շատ տեղեր ենք հատկացրել: Թեեւ պարտավոր ենք պահպանել կառավարության կողմից հաստատված ակադեմիայի անդամների առավելագույն թիվը՝ 137»*,–ասաց Ռ. Մարտիրոսյանը:

Հայտարարված տեղերի ընդհանուր թիվը կազմում է 28, որից 6-ը պետք է զբաղեցնեն ակադեմիկոսները՝ 11 հայտ, 22-ը՝ թղթակից անդամները՝ 69 հայտ: Յուրաքանչյուր տեղի համար առաջադրված թեկնածուների միջին թիվը 3-ն է: Եվ քանի որ հայտարարությունից հետո ընտրությունը պետք է սկսվի 2 ամսից ոչ շուտ, ընտրական գործընթացը բաժանվում է երկու մասի: Առաջին ամիսը տրամադրվում է թեկնածուների առաջադրմանը: Սա այս տարվա ընտրությունների համար արդեն ավարտված է: Երկրորդի ժամանակ էլ արդեն առաջադրված թեկնածուներին են «հետազոտում», որի հիմքում թափանցիկությունն է: Այդ իսկ պատճառով կազմավորված հանձնաժողովը ամեն մի թեկնածուի լսելու է, այսպես ասած, «գրատախտակի առջեւ»:

*«Վերջնական ընտրությունը կատարվում է ակադեմիայի ընդհանուր ժողովում, որին, ասենք, օրինակ, ակադեմիկոս ընտրելու համար պետք է մասնակցի ընդհանուր ակադեմիկոսների 3/4 մասը: Ընտրությանը հաղթող են համարվում նրանք, ովքեր «հավաքել» են ներկաների «ձայների» 2/3 մասը»*,-նշեց ԳԱԱ նախագահը:

Հավելենք, որ ակադեմիական ընտրությունները պետք է տեղի ունենան 3 տարին մեկ: Թեեւ այս տարի ՀՀ ԳԱԱ-ում այն մեկ տարի ուշացումով է իրականացվում՝ հայտնի ֆինանսական ճգնաժամի պատճառով: Ընտրությունները կանցկացվեն դեկտեմբերի 27-28-ին, ինչպես արդեն նշեցինք, ԳԱԱ ընդհանուր ժողովի ընթացքում:

Եզրափակելով ասուլիսը՝ Ռ. Մարտիրոսյանը վստահեցրեց. *«Մեր ընտրությունները ամենաճիշտ ընտրություններն են»*: